Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ***Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը***

   Սասունիկ Մելիքյան

2. ***Զբաղեցրած պաշտոն(ներ)ը***

   ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժնի պետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

   Թուրքիայի Հանրապետություն (Ստամբուլ), նոյեմբերի 13-15-ը

4. ***Հրավիրող կողմը***

   Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն /ՍԾՏՀԿ/

5. ***Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

   Մասնակցություն Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության /ՍԾՏՀԿ/ կրթության և գիտության և տեխնոլոգիայի հարցերով աշխատանքային խմբերի նիստերին

6-7. ***Քննարկված թեմաները և հանդիպումները***

Կրթության աշխատանքային խումբ.

ԿԱԽ-ի հանդիպմանը մասնակցել են ՍԾՏՀ վեց անդամ պետության (ԹՀ, ՌԴ, ՀՀ, Վրաստան, Հունաստան, Ռումինիա), կազմակերպության մշտական

միջազգային քարտուղարության (ՄՄՔ) ԳՔ-ն, ՄՄՔ և ՍԾՏՀ ԽՎ քարտուղարության աշխատակիցներ, ինչպես նաև Սևծովյան համալսարանների ցանցի (BSUN) փորձագետը:

Հանդիպումը **ոչ պաշտոնական էր** (Աշխատանքային խմբերում քվորումն ապահովվում է ՍԾՏՀԿ անդամ պետությունների կեսից ավելիի ներկայությամբ՝ այսինք 7 պետության առկայության դեպքում, ներկա էին 6 անդամ երկրների պատվիրակություններ), ՀՀ պատվիրակության կազմում էին և ՍԾՏՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ս. Սարգսյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարության մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժնի պետ Ս. Մելիքյանը:

Քննարկված թեմաները.

ՍԾՏՀԿ բանաձևերի, որոշումների և առաջարկությունների իրականացման ընթացքը, համակարգող երկրի(ՌԴ) գործունեության գնահատման զեկույցի քննարկում (2018 թվականի հունվարի 1 - 2019 թ. դեկտեմբերի 31), բարձրագույն կրթության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ կոնկրետ առաջարկությունների քննարկում, ՍԾՏՀԿ անդամ պետություններում բարձրագույն կրթության վերաբերյալ բրոշյուրի հրատարակման, տեղեկատվական ցանցի ստեղծման, սևծովյան ակադեմիական և հետազոտական կոնսորցիումի ստեղծման հարցերը:

ՌԴ-ն ներկայացրեց ԱԽ-ում իր երկամյա համակարգման գնահատման զեկույցը (2018-19թթ.), իսկ Հունաստանը հայտնեց իր մտադրությունը ԱԽ հաջորդ երկու տարիների համակարգումը ստանձնելու համար: ԹՀ պատվիրակությունը ներկայացրեց “Information Network in Recognition and Equivalency of Qualification in Higher Education among BSEC Member States” խորագրով պրեզենտացիա և խնդրեց պետություններին խնդրո առարկա հայեցակարգի վերաբերյալ գրավոր նկատառումներ ու առաջարկներ ներկայացնել: Հունաստանի պատվիրակությունը հայտնեց անդամ պետությունների դպրոցականների շրջանում իրենց նախաձեռնած “Black Sea; the Sea that Unites Us” թեմայով նկարչական մրցույթի հաղթողների (Մոլդովա)

մասին: ՍԾՏՀԿ ԳՔ-ն ընդգծեց նման մրցույթների իստիտուցիոնալիզացման անհրաժեշտությունը: BSUN-ի փորձագետը տեղեկացրեց իրենց տարեկան համաժողովը **2020թ. աշնանն Երևանում** անցկացնելու վերաբերյալ և խնդրեց անդամ պետություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերել այդ համաժողովին:

ՀՀ պատվիրակությունը ներկայացրեց ՀՀ-ում կրթության և աշխատաշուկայի միջև կապի, հմտությունների զարգացմանն ուղղված նորարական ծրագրերի մասին պրեզենտացիա: Մասնավորապես անդրադարձ կատարվեց ՀՀ կառավարության, Հանրային քաղաքականության ինստիտուտի և Հայաստանի Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի կողմից մշակված «Կրթությունից՝ աշխատանք» (Edu2Work) նախագծին, որը նպատական ունի փաստերի վրա հիմնված քաղաքականության օգնությամբ միավորել կրթությունն ու աշխատանքը, ինչպես նաև աջակցել անհատներին ավելի տեղեկացված որոշումներ կայացնել ու ավելի պատրաստված լինել աշխատաշուկա մուտք գործելուն: Այն նախատեսում է ուսումնասիրել և հասկանալ ՀՀ աշխատաշուկան ամբողջությամբ, վերլուծել ապագա միտումները, իրականացնել իրազեկվածության բարձրացման և քաղծառայողների կարողությունների զարգացման միջոցառումներ՝ նորարարական մեթոդների միջոցով, մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների, կանխատեսման վարժությունների և վարքաբանական փորձերի կիրառմամբ: Նախագծի հետազոտության արդյունքները ընդգրկվելու են ՀՀ կառավարության վերջերս նախաձեռնած «Աշխատի՛ր Հայաստան» ծրագրում՝ կառավարության թիրախային քաղաքականության զարգացման համար:

Գիտության և տեխնոլոգիայի աշխատանքային խումբ.

ԳՏՀԱԽ-ի հանդիպմանը՝ նոյեմբերի 15-ին, մասնակցեցին 9 պատվիրակություններ (ՀՀ, ԲՀ, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա,

ՌԴ, ԹՀ և Ուկրաինա), կազմակերպության ԳՔ-ն, ՄՄՔ աշխատակիցները, ՍՈՒՄԿ/ICBSS-ի, BSUN-ի, CPMR-ի և երկու դիտորդ երկրների (ԱՄՆ և Հունգարիա) ներկայացուցիչներ: Սույն հանդիպմանը ևս ՀՀ պատվիրակության կազմում էին ՍԾՏՀԿ-ում ՀՀ ՄՆ Ս. Սարգսյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարության մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժնի պետ Ս. Մելիքյանը:

Քննարկված թեմաները.

ՍԾՏՀ Խորհրդի բանաձևերի, որոշումների և առաջարկությունների իրականացման, ազգային և բաց և ինտերակտիվ վեբ-ռեգիստրների (տվյալների բազա) մշակման, ՍԾՏՀ անդամ երկրների համար նորարարություններին վերաբերող կառույցների գործունեության մասին հարցերը, ինչպես նաև քննարկվեցին առաջարկներ երիտասարդություն-գիտություն-տեխնոլոգիա հարցադրման շուրջը և այլն:

ՌԴ պատվիրակությունը ներկայացրեց վերջին զարգացումները նորարական ազգային կառույցների տվյալների բազայի ու Սևծովյան ակադեմիական և հետազոտական կոնսորցիումի (BSAARC) նախագծերի առնչությամբ: Կազմակերպության մշտական միջազգային քարտուղարության (ՄՄՔ) աշխատակիցը խնդրեց, որպեսզի մնացած երկրները (ներառյալ ՀՀ-ն) լրացնեն հիշյալ տվյալների բազայի համար անդամ պետություններին ուղարկված հարցաթերթիկը և ուղարկեն ՄՄՔ, որպեսզի հնարավոր լինի նախագիծը ամբողջացնել: ՍՈՒՄԿ-ի ներկայացուցիչը ներկայացրեց 2020-2024թթ. ԳՏՀԱԽ-ի գործողությունների ծրագրի նախագիծը և խնդրեց, որպեսզի պետությունները իրենց գրավոր նկատառումները հայտնեն նախագծի առնչությամբ: ԹՀ պատվիրակը ներկայացրեց ԹՀ գիտությունների ակադեմիայի երիտասարդ գիտնականների մրցանակային ծրագրի (GEBİP) մասին պրեզենտացիա, իսկ ՌԴ ներկայացուցիչը պրեզենտացիա՝ “The Black Sea Economic Cooperation Award (Prize) for Young Scientists” խորագրով:

ՀՀ պատվիրակությունը հակիրճ ներկայացրեց «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր՝ մարզաբնակ երիտասարդների համար» պիլոտային ծրագիրը, որն համատեղ իրականացվում է ՀՀ կառավարության և Կոլբա նորարարական լաբորատորիայի կողմից: Այն նպատակ ունի ՀՀ մարզերում բնակվող երիտասարդության համար ապահովել մրցունակ և կայուն աշխատանքային հնարավորություններ, ընդլայնել զբաղվածության հնարավորությունները՝ ինքնազբաղվածության և ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու նորարական մոտեցումների միջոցով: Ներկայացման ավարտին ՀՀ պատվիրակությունը մատնանշեց կրթության և աշխատաշուկայի փոխկապակվածության խթանման և երիտասարդների համար մրցունակ և կայուն աշխատանքային հնարավորությունների ապահովման և այդ նպատակով նորարարական կրթական և սթարթափ ծրագրերի զարգացման հարցում ՍԾՏՀԿ անդամ պետությունների միջև համագործակցության կարևորությունը: Գիտության և տեխնոլոգիայի ոլորտներում ՍԾՏՀ-ԱՄՆ մտադրությունների հուշագրի կետի ներքո ԲՀ-ի և ՍՈՒՄԿ-ի ներկայացուցիչները տեղեկացրեցին “Marine Research and Innovation for Sustainable Blue Growth. Environmental Challenges and Ecosystem Resilience” խորագրով ԱՄՆ-ի հետ համատեղ սեմինար կազմակերպելու գաղափարի մասին, իսկ ԱՄՆ-ն հայտնեց, որ իրենք կսպասեն հարցի առնչությամբ ԳՏՀԱԽ-ի կոնկրետ առաջարկին:

8. ***Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

Կրթության աշխատանքային խմբի հանդիպումը ոչ պաշտոնական էր, քանի որ ներկա էին 6 երկրների պատվիրակություններ, այդ պատճառով աշխատանքների ավարտին ընդունվեցին **Եզրակացություններ:**

Գիտության և տեխնոլոգիայի աշխատանքային խմբի աշխատանքների ավարտին հաստատվեց **Հաշվետվությունը:**

9. ***Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները:***

Քննարկվեց աշխատանքային խմբերի հանդիպումներին քվորումի բացակայության հարցը: Պատվիրակությունները մտքեր փոխանակեցին այդ առնչությամբ և դրանցից մի քանիսը պաշտպանեցին նախկինում հնչեցրած ՀՀ առաջարկը՝ հեռուստակամրջի միջոցով ապահովել պետությունների այն ներկայացուցիչների/փորձագետների մասնակցությունը ԱԽ-ների հանդիպումներին, ովքեր տարբեր պատճառներով չեն կարողանում ներկա գտնվել այդ հանդիպումներին: ՍԾՏՀԿ ԳՔ-ն արձագանքեց, թե այնքան էլ լավատես չէ հեռուստակամրջի միջոցով մասնակցության առչությամբ, քանի որ վստահ չէ, որ անդամ պետությունների բոլոր ոլորտային նախարարությունները և իրավասու մարմիններն են հագեցված տեխնիկական ու ծրագրային հնարավորություններով, ինչպես նաև այն, որ դժվար, թե մայրաքաղաքներում ոլորտային նախարարությունների ներկայացուցիչներն ի վիճակի լինեն հետևել ԱԽ-ների աշխատանքներին ողջ հանդիպման ընթացքում՝ աշխատավայրում իրենց զբաղվածության պատճառով: Ըստ նրա, հանդիպումներին ահնրաժեշտ է ֆիզիկական ներկայություն: ՀՀ-ն արձագանքեց, որ հասկանում է ԳՔ մտահոգությունը, սակայն պետք է ճանապարհներ որոնել կազմակերպության խրոնիկական խնդիրներից մեկը համարվող քվորումի բացակայության հարցը լուծելու համար: ՀՀ ՄՆ-ն հավելեց, որ տեսակամրջի միջոցով մասնակցությունը չպետք է լինի հանդիպումներին ֆիզիկական մասնակցության փոխարեն, այլ դրանց լրացնող, լրացուցիչ հնարավարություն, ինչը նաև հնարավորություն կտա ապահովել քվորում հանդիպումների համար՝ այդպիսով բարձրացնելով դրանց արդյունավետությունը: Ըստ ՀՀ-ի, շատ միջազգային կառույցներ իրենց աշխատանքային պրակտիկայում կիրառում են տեսակամրջի/տեսակոնֆերանսի հնարավորությունները:

ՌԴ պատվիրակությունն առաջարկեց կազմակերպել բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկված ՍԾՏՀ երիտասարդ ուսուցիչների/դասատուների աշխատաժողով (անմիջապես ԿԱԽ-ից հաջորդ հանդիպումներից առաջ կամ հետո) և պատրաստակամություն հայտնեց համապատասխան հայեցակարգ կազմելու համար: Հունաստանի պատվիրակությունը հայտնեց անդամ

պետությունների դպրոցականների շրջանում իրենց նախաձեռնած “Black Sea; the Sea that Unites Us” թեմայով նկարչական մրցույթի հաղթողների (Մոլդովա) մասին: ՍԾՏՀԿ ԳՔ-ն ընդգծեց նման մրցույթների իստիտուցիոնալիզացման անհրաժեշտությունը: BSUN-ի[1] փորձագետը տեղեկացրեց իրենց տարեկան համաժողովը 2020թ. աշնանն Երևանում անցկացնելու վերաբերյալ և խնդրեց անդամ պետություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերել այդ համաժողովին:

ՌԴ պատվիրակությունը ներկայացրեց վերջին զարգացումները նորարական ազգային կառույցների տվյալների բազայի ու Սևծովյան ակադեմիական և հետազոտական կոնսորցիումի (BSAARC) նախագծերի առնչությամբ: ՄՄՔ աշխատակիցը խնդրեց, որպեսզի մնացած երկրները (ներառյալ ՀՀ-ն) լրացնեն հիշյալ տվյալների բազայի համար անդամ *պետություններին ուղարկված* հարցաթերթիկը և ուղարկեն ՄՄՔ, որպեսզի հնարավոր լինի նախագիծը ամբողջացնել:

10.

19.11.2019թ.